

29 Մայիս 2009

Դիմակայելով փոթորկին. Տնտեսական ճգնաժամն ուշադրության Ռիչարդ Կիրակոսյան

Չնայած մայիսի 31-ին Երևանում անցկացվելիք առաջիկա ավագանու ընտրությունների կարևորությանը՝ այս շաբաթ Հայաստանի մայրաքաղաքում բավական աշխուժություն էր նկատվում՝ կապված ոչ թե քաղաքական, այլ տնտեսական ճգնաժամի հետ:

Շաբաթը սկսվեց առաջին անգամ անցկացված կարևոր տնտեսական ֆորումով, որին մասնակցում էին Հայաստանի տնտեսական ոլորտի նախկին և ներկա մի շարք պաշտոնատար անձինք, ինչպես նաև առաջատար միջազգային փորձագետներ: Համատեղ քննարկման նյութ դարձան ստեղծված իրավիճակը և համաշխարհային ֆինանսական տնտեսական ճգնաժամի հետևանքները հաղթահարելու ուղղությամբ Հայաստանի ձեռնարկված հնարավոր քայլերը (Տե՛ս [Հայաստանում կազմակերպված ֆորումը միավորել է տնտեսական քաղաքականության մշակմամբ զբաղվող մասնագետներին](#)):

Վաշինգտոնում գտնվող «Policy Forum Armenia» անկախ խմբի նախաձեռնությամբ ֆորումը գրավեց տարբեր գործիչների ուշադրությունը, ովքեր ներկայացրեցին մի շարք օբյեկտիվ հոդվածներ Հայաստանում ստեղծված իրավիճակի առնչությամբ: Առանձնակի ուշադրության է արժանի բազմաթիվ փորձագետների նախագգուշացումն այն մասին, որ Հայաստանի կառավարությունը տնտեսական ճգնաժամին դիմակայելու առումով բավական թույլ նախապատրաստված է թվում, իսկ առաջարկված միջոցների մեծ մասը չափազանց ուշացած և թույլ են՝ հարաճուն տնտեսական մարտահրավերներին համարժեք պատասխան տալու համար:

«Policy Forum Armenia»-ի համահիմնադիրներից մեկի՝ հայտնի տնտեսագետ Դավիթ Գրիգորյանի կարծիքով՝ ֆորումի նպատակը «ոչ միայն անկախության տարիների ընթացքում Հայաստանում կուտակված տնտեսական քաղաքականության անցկացման փորձի, այլև ճգնաժամային կառավարման առնչությամբ հյուրերի ներկայացրած համապատասխան արտաքին փորձի կիրառումն է»:

Ֆորումի մասնակիցները ձգտեցին նաև մի շարք առաջարկություններ ներկայացնել Հայաստանի կառավարությանը, որոնք համարվում են բավական հրատապ՝ հաշվի առնելով գալիք տարի ճգնաժամի ավելի խորանալու բազմաթիվ կանխատեսումները: Առաջարկություններում մեծ ուշադրություն է հատկացվում «համակարգային միջոցների» ու «կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների

անհրաժեշտությունը», ինչը հնարավորություն կտա առավել օպտիմալ դիմակայել Հայաստանի տնտեսության անկմանը:

Ներկայացնելով երկրում իրավիճակը՝ ՀՀ ԿԲ փոխնախագահ Վաչե Գաբրիելյանն ընդամենը հաստատեց ճգնաժամի դաժանությունը և հաղորդեց, որ բանկի անցկացրած վիճակագրական տվյալների վերջին վերլուծությունների համաձայն՝ 7-8 տոկոս տնտեսության անկում է սպասվում: Նախկին վարչապետ Հրանտ Բազրատյանն ավելի հեռուն գնաց՝ հայտարարելով, որ ավելի օբյեկտիվ վիճակագրական ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի տնտեսությունն այս տարվա միայն առաջին չորս ամիսներին արդեն 9,7 տոկոսով կտրուկ անկում է ապրել:

Ռուսաստանից տնտեսագետ Աբել Աղանբեգյանն կառավարությանը կոչ արեց «զարգացնել փոքր և միջին բիզնեսը»՝ որպես հնարավոր միջոցներից մեկը, որը կարող է յուրօրինակ լոկոմոտիվ ծառայել աշխատատեղերի ավելացման և ստեղծման համար: Սակայն նախկին վարչապետ Բազրատյանը մատնանշեց դրան խիստ խանգարող կոռուպցիայի և տնտեսության կառուցվածքային ձևափոխման գործոնները՝ պնդելով, որ երկրի արտադրության ընդհանուր ծավալի մոտ 51 տոկոսը իրականում վերահսկվում է փոքրաթիվ վերնախավը, որը շարունակում է հրաժարվել իր բաժին օրինական հարկերը վճարելուց և մահացու գոտեմարտով կառչել է Հայաստանի ներմուծմանը:

Այդ խորացող մարտահրավերներին դիմակայելու համար Բազրատյանը խորհուրդ տվեց մշակել նոր «հակաճգնաժամային ծրագիր», որը կհիմնվեր արտայժույթի հետագա արժեզրկման վրա և հաշվի կառներ տնտեսական համակարգի կառուցվածքային թերություններին: Սակայն, չնայած ֆորումում ներկայացվածության բարձր մակարդակին, պարզ չէ՝ ի վիճակի՞ է արդյոք Հայաստանի կառավարությունն ընդունել այս կարգի քննադատական գնահատական և կառուցողական առաջարկություններ: Պարզ չէ նաև՝ կարո՞ղ է նա արդյոք նույնիսկ լսել:

Փոխակերպելով տնտեսական ներուժը բիզնեսի իրողության

Տնտեսական ֆորումից ընդամենը երկու օր անց «ՎիվաՍել-ՄՏՄ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը ելույթ ունեցավ Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնում (ԳՏՏԿ): Յիրիկյանի դասախոսությունը՝ վերնագրված «ՎիվաՍել-ՄՏՄ. բիզնես և առաքելություն», առաջարկում էր Հայաստանի առաջատար բջջային կապի օպերատորի եզակի ներթափանցում «տեխնիկական գործընթացներում և մենեջմենթի մշակույթում» և ընդգրկում էր երկրում բջջային հաղորդակցության տեխնոլոգիաների իրավիճակի ուսումնասիրություն:

Ամենաէականն այն փաստն էր, որ Յիրիկյանը՝ որպես «կորպորատիվ սոցիալական պատասխանատվության» ծրագրերի ոլորտում առաջատար, որով ենթադրվում է, որ բիզնեսը պետք է «վերադարձնել» հասարակությանը, ուշադրությունը կենտրոնացնում

է այն սակավաթիվ օրինակներից մեկի վրա, որտեղ Հայաստանն իրոք ի ցույց է դնում տնտեսական ներուժը բիզնեսի իրողության փոխակերպելու կարողությունը: Եվ «ՎիվաՍել»-USU-ի տնօրենը փաստորեն միայնակ է հետևում կորպորատիվ թափանցիկության փորձին, այդուհանդերձ, չձգտվելով տիրել շուկային, այլ հասնելով առողջ շուկայի մրցունակ պարտավորությունների:

Յիրիկյանը համոզված է նաև, որ «բիզնեսը պետք է նախևառաջ օգնի կրթության համակարգին»: Նշելով, որ «ՎիվաՍել»-ի համար «ցանկացած զարգացում սերտորեն կապված է կրթության մակարդակի հետ, նա ասաց, որ կրթությունը «մի միջոց է, որը թույլ կտա ստեղծել աշխատատեղեր և օգտագործել մեր սեփական մարդկային կապիտալը: Այսպես հնարավոր կլինի խուսափել նաև [Հայաստանից] «ուղեղների արտահոսքից»:

Ինչ-որ մեկը լսո՞ւմ է

Թեև այս շաբաթվա իրադարձությունները հաստատում են խորացող տնտեսական ճգնաժամի շրջանում կառավարման որակի բարձրացման խիստ անհրաժեշտությունը՝ կարելի է սպասել նոր, ավելի լուրջ կենտրոնացում ճգնաժամի հետևանքների վրա Հայաստանի տնտեսության համար: Սակայն այս կարգի համաժողովները և դասախոսությունները բավարար չեն: Հայաստանի քաղաքական գործիչները և կառավարության անդամները առավել կարիք ունեն լսելու ունակության: Ինչպես արդեն համոզվել է Ռալֆ Յիրիկյանը, հրամայական է ոչ միայն ներուժի փոխակերպումը իրողության, այլև անցումը հակաճգնաժամային պատասխան գործողությունների, քանի դեռ շատ ուշ չէ:

.....

Ռիչարդ Կիրակոսյանը Երևանում Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրենն է: (ՌԱՀՀԿ): Դիմակայել փոթորկին» խորագիրը շաբաթական սյունակ է, որը նա վարում է հատուկ «ԱրմենիաՆաուի» համար:

<http://www.armenianow.com/?action=viewArticle&IID=1236&CID=3607&AID=3746&lng=arm>